

է երկինքի կայծակին . կը փայլատակէ և թշնամին կ'իյնայ : Իր բազուկը նման է ուրուականի մը բազուկին, որ՝ շաղկնաբու ծոցէն՝ անդրեւոյթի և անվրէպ հարուածներ կը շանթէ . մարդ չի տեսներ թէ մը կանգ կ'առնէ անագորոշն ստուերը . բայց մահը կը հնձէ հովիտին բնակիչները :

Որդիս կը նշմարէ թշնամին, կանգ կ'առնէ և կը մտածէ վայրկեան մը լուսթեամբ . « Կ'իմակ եմ ես թշնամի բանակին մէջ : Ինչպիսի՜ անտառ մարդախոշոշ ուղեբու : Քանի՜ դժնէ նայումաքներ վրաս զամուած : Դառնամ Արուենի բլրան վրայ... Ոչ, իմ հայրերս չփախան երբեք : Իրենց բազուկը՝ հազար պատերազմներու մէջ՝ ձգեց անոնց բաշտթեան հետքերը . ես ալ քաջ եմ և պիտի պատկուիմ փառքերով... Ելէ՛ք, հայրերսու ստուերներ, վկայ եղիք իմ շահաւատկութիւններու : Պիտի մեռնիմ փառքով, արեւանաւոր Մորուենի ցեղին » :

Կը կոտին . ամէնը կը փախին Ոսկարի առջեւն . իր սուրը արեւն կը կաթկորթէ . Իր մարտիկները՝ կրօնայի բլուրներուն բարձունքէն՝ կը լսեն պատերազմին խռիւնը . կը զահաւիտին դէպ ի դաշտը : Կարոսի բանակը կ'առնէ փախուստը : Ոսկար կը մնայ պատերազմի դաշտին վրայ, ինչպէս քարաժայռ մը՝ որմէ ետ կը քաշուի ծովը :

Կարոս, վարելով իր խրոխտապանծ նժուղները, կը սուրայ՝ սրընթաց և խոր հեղեղատի մը պէս, որ կը թաւայի և կ'աւերէ . առուակները կը կորստին իր փոթորկոտ ընթացքին մէջ, և բլուրները կը զսփան անցնելու առերես : Պատերազմը կը տարածուի մէկ թեւէն միւսը . տասն հազար սուրեր կը շողողան օդին մէջ :

Բայց ինչպէս համար Ռոսիան պատերազմները կ'երգէ : Յաւով է որ կը յիշեմ երբեք մասնաթղթեանս գեղազուարթ օրերը, երբ կը զգամ բազուկիս տկարութիւնը :

Երանէ՛ անոնց որ մեռած են ծաղիկ հասակի մէջ, իրենց փառքին բարձր շաղկնին մէջ : Չտեսան անոնք գերեզմանները իրենց բարեկամներուն, չզգացին անոնք գիմապրիլը իրենց աղիկին՝ Ղլառ ձեռքներնուն բնորոշայն ճիգերուն պէմ :

Այո՛, երջանիկ ես գուն, սիրելի Ոսկարս, բու փոթորիկներուդ մէջ . յաճախ կ'այցնէս գուն քու փառքերուդ դաշտը և այն տեղերը՝ ուր տեսար գուն Կարոսի փախչիլը զարհուրելի սուրիդ առջեւն :

Դաւտար Տոսկարի, ի՞նչ ամպ է որ կը պատէ հոգիս : Որբոյս ստուերն ալ չեմ տեսներ Կարոսին մօտ . ալ չեմ տեսներ Ոսկարը Կրօնայի բլրան վրայ : Հովերը հեռուն տաւրին զանդիկա, և տխրութիւնը կու գայ իր հօրը սրտին մէջ... Բայց, ո՞վ Մալուինա, տար գիտ իմ անտառներուս մէջ, իմ հեղեղասներուս եզերքը, որ լսեմ որսի աղաղակները Կրօնայի վրայ և յիշեմ այն երջանիկ ժամանակները որ անցեր գացեր են : Դաւտար իմ, բեր տաւիղս, որպէս զի՛ երբ զգամ իմ մէջս հանճարիս կրակին արծաթծիլը՝ զարնեմ . այն աստի, ո՞վ Մալուինա, եկուր երգես ունկնդրելու :

Ազգական պիտի լսէ խօսուելը Ռոսիանի վրայ : Որ մը վատին թոռները պիտի բարձրացրեն իրենց ձայնը Կրօնայի վրայ, և նայելով այս քարաժայռին՝ պիտի գոչեն . « Հոս բնակեցաւ (Ռոսիան) » . ու պիտի զարմանան այն ցեղերուն վրայ որոնք չկան ալ և պիտեղաներուն՝ զորս ես երգեցի :

Եւ մենք, ո՞վ Մալուինա, հեծած մեր ամպերուն վրայ, պիտի ճանապարհորդենք հովերու լեռնին վրայ : Մեր ձայները երբեմն պիտի լսուին անապատին մէջ, և ժայռերը պիտի կրկնեն տկար մրմունջը մեր երգերուն :

Թրգմ. Է. Ա. ԱՋԱԿԵԱՆ



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(Շար. տիտ էջ 6)

ԲՐԱՆԱԿԱՆ ազգեցութիւնը Հին Հայոց կրօնական հաւատալեաց վրայ .

Բայ ի այս իրանական ծագումից յառաջացած շաստուածներէց, որ պաշտում էին Հին Հայերը, հայ մատենագիրներն յայտնի

էր նաեւ Ավեստայի Zrvan-ը, Զրուան = պեհլեւի Zurvān, Zurvān-i-akanarak, Zurvān-i-akanar: Եղնիկը Զրուան բառը հինգ չէ թարգմանում « Բախտ կամ փառք », ինչպէս իրաւացի նկատում է Հիւրլմանը. այն ինչ այս բառիս արմատական նշանակութիւնն է « ժամանակ »: Եղիշէի պատմութեան մէջ Պարսից վզուրկ հրամանատարը Զրուանին կոչում է « մեծն աստուած »: Եղնիկի և Եղիշէի ասելովը՝ Որմիզդ և Արշմէն համարում էին որդիք Զրուանի, որ զգուծիւն է ունեցել աշխարհիս ստեղծագործութիւնից առաջ: Սակայն մեզ մատչելի Ավեստայի բոլոր յիշատակարաններում Զրուանը, համեմատաբար միւս շատուածների հետ, յետին տեղն է զբաւում: Ոչ մի տեղ չէ յիշատակում մեհէանների կամ ասորուշանների մասին, որ Հայերը շինած լինէին ի պատիւ Զրուանի:

Ավեստայում Zrvan-akarana (յաւիտեանական ժամանակ) դեռ եւս յիշեան է գալիս միանգամայն վերացական մտքով. միայն տակաւ առ տակաւ, երբ Պարսից կրօնը աւելի շահագրգիռ ուղղութեամբ է առաջ ընթանում, կամ գուցէ, օտարազգի կրօնական քստեմնների ազդեցութեան ներքոյ, Ավեստայի գիտուն վերծանողները « յաւիտեանական ժամանակը » հայր դարձրին երկուորական սկզբունքի (չարի և բարւոյ) երկու զըլխաւոր ներկայացուցիչների (Մի զրադաշտական աղանդի հետեւողները, ինչպէս յայտնի է, կոչում էին դրուանականք. այդ աղանդաւորները բարի ու չար ոգուն վերագրում էին մի բարձրագոյն, զազափարական սկըզբին:

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Եղնիկը, ապրելով քրիստոնէութեան և մազդեանաց մոգութեան աշիւղ կուլաների միջոցին, շատ խիստ կերպով յարձակում է « Զրուանի արական » վրայ, մենք արամայիքի ենք կարծեւոր, թէ Հայերի մէջն եւս միայն այս շատուածի երկրպագուները, Բայց զորանով, մենք ի հարկէ, չենք կամենում առել, թէ դրուանականների վարդապետութիւնը տի-

րապետող կրօնն է եղել Հայտատանում կամ Վրաստանում: Միհրներսէի յայտնի նամակը Հայերին (Եղիշէի Պատմ.) ակնարկում է այն իրողութեան վրայ, որ զրադաշտական կրօնը, հինգերորդ դարում պետական կրօն լինելով Պարսկաստանում, դաւանում էր Զրուանին իբրեւ հայր Որմիզդի և Արշմնի, ապա ուրեմն շատ բարձր դիրք ունէր կրօնական տեսակէտից: Այդ բանը հաստատում է նաեւ Եղնիկի ցուցումներին, և արեւի է մինչեւ անգամ ենթադրել, որ զրուանականների աղանդը, մազդականների աղանդի նման, կուսատւ I (489-531) օրերում մի առ ժամանակ Պարսից դրանը տիրապետող վարդապետութիւնն էր: Բամենայն դէպս պէտք է այն եւս աչքի առաջ ունենալ, որ Միհրներսէն, որ հռչակում էր Պարսկաստանում իւր կրօնական եռանդով ու քարեպաշտութեամբ չէր կարող բնաւ հերձուածող համարուի Սասանեանց պալատում ընդունուած կրօնի տեսակէտից:

Բայց ի այս բարձրագոյն ոգիներէց ու շատուածներէց, իրանական դիցարանութեան մէջ կային նաեւ երկրորդական ոգիներ կամ քաջեր:

Չար ոգիների մէջ զխաւորներն դեւերն էին, որոնք մինչեւ ցայսմ էլ յայտնի են կովկասեան շատ ցեղերին: Եղնիկը իւր « Եղծ աղանդաց հեթանոսացն » զբնում դեւերի մասին ասում է հետեւեալն՝ « որպէս յորժամ քաղաքք և գիւղք աւերեսցին, և անդ դեւք բնակեցն, և կեղծս ի կեղծս յայտնիցին, և մարդկան ըստ կեղծեսց նոցա անուանս եւ դեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն համարու կոչիցեն »՝ իրանական դիցարանութեան դեւերը, որոնք Հարամանի արբանեակների դերն էին կատարում, փոխարեան յիշողութեան մէջ մնացել են հին կրօնի անհետանալուց յետոյ եւս Պարսկաստանում: Այդ դեւերը յիշում են Հայոց զրադաշտութեան մէջ եւս: Մովսէս Խորենացին, թեւեւ, իբրեւ աղբիւր կասկածելի է զուտ պատմական տեսակէտից, սակայն շատ թան-

1. Տես. Եղնիկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ Աշխարհի Վնեւորիկ, 1825:

էջ 98. ուր Բարսէն գրում է « Կոչեցին » փոխանակ « Կոչեցեն »: Մ. Գ.:

կազին է Սասանեանց օրերի Պարսկաստանի
ուսումնասիրութեան համար¹, մէջ է բերում
Հայոց վրայ թաղաւորող Դաւիթի այս պա-
տասխանը Ատոմ Մոկացու նախարարին .
« դու երթիշիր, զի ի քարին զիւաց է շա-
հատակել » (Պատմ. գր. III. գլ. 55). Նոյն
Մ. Խորենացին մեզ աւանդում է, թէ « վի-
շապագունք գողացան զմանուկն Արտաւազի,
և դեւ փոխանակ եղին » (III, 61)² . Համ.
նաեւ Փաւստոսի Բուզանդացու VI դարու-
թեան VIII, գլ. « դեւ ուրեմն հարաւ ի քեզ » .
(Այս խօսքերը մի աւագակին ստում են նորա
կերեւ ե ընտանիքը, երբ նա մի օր տուն վե-
րադառնալով, հրամայում է իւրայնոց : « Ա-
րիք կամք յողօթս, վասն զի երէց եմ » . իսկ
երէց՝ բռնի ձեռնադրել էր նորա Փաւստոսի
Պատմութեան մէջ մի յայտնի խեղկատակ
Յոհան եղիսկոպոսը . Մ. Դ.) . Գալով պարիկ
անուան, շարունակում է բարոնը, դա, ան-
կապած, իրանական — պեհլեւի ծագումիցն
է . համ. Ավեստայի pairika, պեհլ. parik,
նոր Պարսից Տր (Հիւրման. Հայ. Քեր. I.
էջ 228, 523) .

Մինչդեռ ավեստական pairikā և պեհլեւի
parik իրական սեռի գեւ են նշանակում,
Տր նոր Պարսից բանաստեղծութեան մէջ
բարի հրեշտակի դերն է կատարում, որ օժ-
տուած է գերբնական զեղեցկութեամբ . Եղ-
նիկի վկայութիւնից ճշդիւ չէ որոշում այս
ոգիների բնաւորութիւնը հին Հայոց հաւա-
տայնաց մէջ և մենք տրամադիր ենք նոցա
համարելու, պեհլեւի ոգիների նման, աւելի
շար, քան թէ բարի :

Յուշկապարիկ³ բառը այնքան էլ պարզ չէ
մեզ համար, ասում է հեղինակը . այս բառիս
երկրորդ մասն—կարիկ—բոլոր ուսումնական
քննադատներին կարծիքով, նոյն է թէ նախ-

ընթաց անունն ոգիների . իսկ առաջին մասն
Հիւրմանը համեմատում է, թէ և փոքր ինչ
տատանուելով, պարսկական Անջ, էշ, բառի
հետ (Angelo à S. Joseph—Garaphylacium
linguae Persicae էջ 33) . Եղնիկը հետեւեալ
կերպով է նկարագրում այս ճիւղներին .
« յուշկապարկաց ասն բնակիլ յաւերական,
զոր յոյն լեզու իշացուլ ասէ » : Եղնիկի յու-
շապարիկ բառի թարգմանութիւնը — իշացուլ
— հաստատում է այն հանգամանքից, որ
Հայոց « յուշկապարիկը » Առտուածաշունչ
գրոց մէջ համապատասխանում է Բուռաց
Ὀυκένταυρος բառին (Մարտիրոսիկին Ե-
սայեայ գլ. 13, 34. Մ. Խորեն. գր. II.
գլ. 63) :

Հայոց դիցաբանութեան մէջ կասկածելի
է նաեւ համբարունների անուան ծագումը, որ
պատահում է Եղնիկի և Սուրբ գրոց մէջ .
(Մեքայ, Եսայեայ մարգ .) օր. զգաւրեաց
համբարեաց — θυματέρων σειρήνων . Յորայ .
30 . Եղբայր եղեւ համբարուաց — ἀδελφός
γέροντα σειρήνων . Երեմ. դատերք համբարեաց
— θυματέρες σειρήνων . Եսայ . համբարուք —
σειρήνες, և բնակութիւն համբարեաց — ἐναύ-
λεις σειρήνων, և այլն :

Հին Հայերը կարծում էին, թէ « համ-
բարուաց ծնունդը գոն և մեռանին » Եղնիկ :
Դիւրադարձաբար այս բառիս ճիշդ ստուգաբա-
նութիւն տակաւին յայտնի չէ : Մենք ենթա-
դրութեամբ միայն համեմատում ենք համ-
բարուն Հայոց համբար բառի հետ (de La-
garde Arm. stud. էջ 82), որ նոյնպէս պարս-
կական ծագումիցն է . այս դէպքում Հայոց
« համբարու » մօտ է հին Պարսից hamba-
runa բառին, որ մօտաւորապէս նշանակում
է՝ տան ոգի, դեւ (Ոսեւաց « domoroy ») :

Եղնիկը յիշում է նաեւ ծովացուլի մասին,

1. A la bonne heure, կը նկատենք մեր կող-
մից : Մ. Դ. :

2. Այս աւանդութիւնը Խորենացու պատ-
մութեան II գրքի, 61 գլխումն է և ոչ թէ
III գլխի, 61 գլ. : Այսպիսի անճշդութիւններ
պակաս չեն բարոնի յօդուածում : Գուցէ մեզքը
տպարանի կողմիցն է : Մ. Դ. :

3. Ըստ Հայկապեան բառագրքի՝ ճիւղ գա-
մաքային, կամ ջրային և կամ երկակենցաղ .

առաւել մտացածին՝ խառնակ կենդանի որպէս
Պարիկ իշուկ, այսինքն իշացուլ . յն. Ουκένταυρος,
ονοcentaurus . որ և Համբարու, և ձիացուլ .
յն. Ιππocένταυρος, և այլն : իսկ բոս Եղուսուրք
Հիւրմարիկ՝ Եւշկապարիկը կամ Կենտարուք,
ճեւալք յիւքսանէ և յամպոյ . հրէշք մարդա-
կերպը, ի միջոյ և ի վայր ձիակերպք . (անեռ
ծանօթ. առաջին գրոցն « Արեւածք Տըւեմաբայ » .
Վենետիկ, 1850 թ.) : Մ. Դ. :

որ իբր թէ կովից է ծնուել — «զոր ի կովէ եղեալ ասին» : Այդ ծովացուիբը Պարսից գիցարանութեան մէջ եւս յայտնի են : Բռն-գեհնուլ (Հրատար. Iusti զլ. XIV և այլուր) կարդումենք՝ «ծովացուի (ցու-ծուկն) մասին աւանդում են, թէ նա ապրում է բոլոր ծովերում. երբ նա գոռում գոչում է, բոլոր ձկները յղանում են և ծովային բոլոր փնասկար կենդանիները ծնում են իւրեանց սերունդները» : Այս ծովացուը — gāvmāhik պեհլեի լեզուաւ — յիշում է նաեւ Ֆիրդուսի, (էջ 444, 190), ուր աւանդւում է Սու-հրաբի նմուզի մասին, որ իբր թէ նորա սմբակի Հարուածից սոսկաց մինչեւ անգամ gāvmāhi

رخ سمش کاوماهی ستود

Պարսիկների, Քրդերի և Օսերի կարծիքով այդ առասպելական ցլի եղջիւրների վրայ հանգչում է համայն տիեզերքը : Քրդերը դուրան կոչում են gāmāsi, իսկ Օսերը — «գէխ՝ խիլխէցէց գալ» — երկիրը պահող ցուլ : Նոյն ցլի մասին յիշում են նաեւ Պարսից հետեւեալ գերերկրները՝ Ֆերիդ-է-զդին Ատտարը և Օմառ Խէյեամ : Այս Ատտարի երկտողը՝

چون زمین در پشت کاو است
کاو بر ماهی و ماهی بر مو است

«Երբ երկիրը հանգչում էր ցլի կոնակի վրայ — ցուլը ձկան, իսկ ձուկն երկրի վրայ»
Միւս բանաստեղծ — Խէյեամը գրում է՝

کاو و ماهی بر آسمان و نامش در زمین
یک کاو ذکر نهفت بر زیر زمین

«մի ցուլ կայ երկրում — անունն է Պերվին (բազմաստեղծ) : իսկ միւս ցուլը թաքնւում է երկրի տակը» : Վիթխարի ծովացուի մասին Ֆիրդուսի աւանդում է Քէյ խոսքու թա-գաւորի նաւագնացութիւնը նկարագրելու մի-ջոյնին : Թէ և ծովացուի մասին Եղնիկի Հա-րեւանցի նկատողութեան մէջ չէ ակնարկուած այս առասպելական կենդանիների և Հին Հայոց աշխարհիս ստեղծագործութեան վե-րաբերեալ աւանդութիւնների առնչութեան վրայ, սակայն, մենք, այնու ամենայնիւ, կարծում ենք, թէ այդպիսի մի կապ դոցա

մէջ պէտք է լինի, ի նկատի առնելով, որ ստորերկրեայ ցլի մասին աւանդութիւնը մինչեւ ցայսմ ընդհանրացած է Կովկասեան ազգերի մէջ և ի մասնաւորի Հայոց և Վրաց մէջ (տ. Ereker, der Kaukasus und seine völker էջ 207) : Խօսելով Հին Հայոց երեւակայական ոգիների մասին, Եղնիկը յիշում է նաեւ — շահապետք վայրաց, այսինքն տեղերի վերակացու գեւին, որ երևում էր մերթ օձի, մերթ մարդու կերպարանքով : Ազաթանգեղոսի վկայութեամբ շահապետք գեւրեղմանների Հսկողն էր : Այդ բառը, անտա-րակոյս, համապատասխանում է ափստա-կան šoithrapaiti, որ նշանակում է՝ «գաւառների իշխան» : Պարսից կարծիքով Հարս-տութիւնը և դանձերը գտնւում են օձերի Հսկողութեան ներքոյ : Այսպէս Սադին իւր գուլիստան գրքում ասում է

بزرگ کنج مار

գանձի վրայ հսկում է օձը


کنج در دامن مار و مار دامن

գանձը տարան նոքա և օձը փնաց :

Ոգիներն «ἄρχοντες» անուամբ պատա-հում են և Յոււնաց մօտ (տ. Chwolsohn, die Isalier II, էջ 186) : Վրաց մօտ ոգին կոչւում է «Բաւօնի» (Դուրբովիս — Պատմ. պատերազմի և Ռուսաց տիրապետութեան Կովկասում II, էջ 173) :

Մ. ՇՈՎՐԵՆՍ

Շարայայելի



Ա Ր Ա Ր Ա Տ

ՔՐՈՆԷ Հայոց ի քրիստոնէութիւն դար-ձին ի վեր՝ Արարատ լեռը նոյն համարուած է այն լեռան հետ՝ որուն վրայ իջաւ նոյիսն տապանը. և կարելի է թէ պատերազմի ա-տեն դերի բռնուած Հրէիցմէ մտած է (Հայոց մէջ) այս գաղափարը : Իսկ այդ Արարատ լեռը իբրեւ Արարատ ճանչցուած չէ. որով-հետեւ ըստ Հայոց՝ Մատիս, ըստ Թաթարաց՝